ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
« 25 » դեկտեմբերի 2017 թ-ին կնքված N «ՍԱՊԾ-18/03» ծածկագրով՝
Փորձաքննության ծառայությունների մատուցման շրջանակային համաձայնագրի

ք. Երևան « 16 » փետրվարի 2019 թ.

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ի դեմս ղեկավար Գ. Ավետիսյանի (այսուհետ՝ Պատվիրատու), որը գործում է Կանոնադրության հիման վրա, «Ստանդարտ դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Արման Արարատյանի (այսուհետ՝ Կատարող) և վարչապետի աշխատակազմը, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի (այսուհետ՝ Վճարող), բոլորը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով «25» դեկտեմբերի 2017 թ-ին կնքված N «ՍԱՊԾ-18/03» ծածկագրով շրջանակային համաձայնագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.2 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել և սահմանել մինչև փորձաքննության ծառայությունների՝ ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1228-Ն որոշմամբ հաստատված կարգով կնքվող նոր շրջանակային համաձայնագրերի ուժի մեջ մտնելու ամսվա վերջին օրը: Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Կողմերին չի ազատում մինչ այդ Կողմերի միջև առկա պարտավորությունների պատշաճ կատարումից և Պայմանագիրը խախտելու համար պատասխանատվությունից:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	ՎՃԱՐՈՂ
Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին ք.Երևան,Կոմիտաս 49/2 ՀՎՀՀ 00454227	«Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ ք.Երևան,Կոմիտաս 49/4 «Կոնվերս բանկ» ՓԲԸ Հ/Հ 19300990638200 ՀՎՀՀ 00099876	Վարչապետի աշխատակազմ Ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900013000881 ՀՎՀՀ 0250555
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.